

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

# E-LEARNING ԱՌՅԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ


2024

# E-LEARNING ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ


E-Learning առցանց ուսուցման համակարգը հնարավորություն է տալիս կազմակերպել և իրականացնել ուսանողների գնահատում առցանց հարթակում: Գնահատումն իրականացվում է նախապես համակարգում ներկայացված առաջադրանքների հիման վրա, տարբեր ձևաչափերով:

Գործընթացի իրականացման համար նախ անհրաժեշտ է մուտք գործել e-learning համակարգ: Համակարգ մուտք գործելու համար անցնում ենք <https://e-learning.yso.am/login/index.php> հղումով, կամ օգտվում ենք ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջի Registrar բաժնից (նկ.1)



Նկ. 1

Բացված պատուհանում (նկ.2) մուտքագրում ենք մեր համալսարանական էլ. հասցեն (օրինակ՝ name@ysu.am) և գաղտնաբառը:




Նկ. 2


Այնուհետև ընտրում ենք այն դասընթացը, որի շրջանակներում պատրաստվում ենք իրականացնել գնահատման գործընթաց: Դասընթացի համար բացված աշխատանքային տիրույթի վերևի աջ անկյունում միացնում ենք խմբագրման ռեժիմը



և անհրաժեշտ թեմայի կամ օրվա ենթակայությամբ ընտրում ենք «Ավելացնել գործունեություն կամ ռեսուրս» հրահանգը:




Բացված պատուհանում (նկ.3) հնարավորություն կտրվի ընտրել ռեսուրսներ և գործունեություններ: Ուսանողների ձեռքբերումների գնահատման համար հասանելի են հետևյալ գործիքները.




1. Դաս



2. Վիկտորինա




3. Հանձնարարություն



4. Սեմինար

Առցանց հարթակում առավել կիրառելի են 2-րդ և 3-րդ տարբերակները:



Նկ. 3

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԸ ՀԱՄԱԿԱՐԳԻ «ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**


«Հանձնարարություն» գործունեությունը նախատեսված է ուսանողի համար առաջադրանք ձևակերպելու և դասախոսի կողմից առաջադրանքը գնահատելու գործընթացը կազմակերպելու համար: Առաջադրանքը/հանձնարարությունը դասախոսը կարող է ներկայացնել ֆայլի կամ տեքստի տեսքով և ուսանողը առաջադրանքի պատասխանը նույնպես կարող է ներկայացնել ֆայլի կամ տեքստի միջոցով:

Դասընթացում «Հանձնարարություն» ներառելու համար դասընթացի խմբագրման ռեժիմում գործունեությունների կցման պատուհանից (նկ.3) ընտրում ենք «Հանձնարարություն» ռեսուրսը, որից հետո էկրանին բացվում է հանձնարարություն ստեղծելու խմբագրման պատուհանը, որը տրամադրում է հանձնարարությունը ձևակերպելու, կատարման պայմաններ սահմանելու և գնահատման ձևաչափը ներկայացնելու գործիքները: Այդ պատուհանը ներառում է հետևյալ բաժինները.



- **Հիմնական բաժինը**, որը ներառում է «Հանձնարարության անուն», «Նկարագրություն», «Գործունեության հրահանգներ», «Լրացուցիչ ֆայլեր» դաշտերը,
- **Հասանելիություն բաժինը**, որը ներառում է առաջադրանքի կատարման ժամկետները,
- **Պատասխանների ներկայացման տարատեսակներ բաժինը**, որտեղ նկարագրվում են որպես պատասխան ներկայացվող ֆայլերի տարատեսակները, քանակները, չափերը, ֆայլերի տեսակները,
- Նաև առաջադրանքի կարգավորման և գնահատման ևս **9 բաժիններ**. հետադարձ կապի տեսակներ, ներկայացման կարգավորումներ, խմբի ներկայացման կարգավորումներ, ծանուցումներ, գնահատական, մոդուլի ընդհանուր կարգաբերումներ, սահմանափակել մուտքը, գործունեության ավարտը, ունակություններ (նկ...):

Նախ այս պատուհանում լրացնում ենք **հիմնական բաժնի դաշտերը** (նկ. 4)՝ **անունը**, որը պարտադիր լրացման դաշտ է (օրինակ՝ Առաջադրանք 1) և **նկարագրությունը**, որը, օրինակ կարող է հակիրճ ներկայացնել առաջադրանքի բովանդակությունը:




Նկ. 4


«Նկարագրություն» դաշտը դասընթացի էջում կարող է բացակայել, կամ կարող է ցուցադրվել: Նկարագրություն դաշտում տեղադրված ինֆորմացիան դասընթացի էջում ցուցադրելու համար

խմբագրման դաշտի ներքևում ընտրում ենք նշիչը: Հիմնական բաժնում ներկայացվում են նաև գործունեության հրահանգները, որը կարող է լինել հենց ինքը առաջադրանքը, կամ ուղղակի տեղեկատվություն/հրահանգներ առաջադրանքի կատարման և ներկայացման պայմանների վերաբերյալ:

Անհրաժեշտության դեպքում առաջադրանքի ստեղծման համար կցվում են նաև ֆայլեր (նկ. 5)՝ օգտագործելով «Լրացուցիչ ֆայլեր» դաշտը:

**Ուշադրություն.** համակարգն իր աշխատանքի ընթացքում սպասովում է նաև անհրաժեշտ **հուշումներով**, որոնք գործողությունների ընթացքում բացահայտ չեն երևում, սակայն հասանելի են դառնում տվյալ գործընթացի ենթակայությամբ տեղադրված  հարցականի նշանին (հուշարարին) սեղմելով:

Մասնավորապես, «Լրացուցիչ ֆայլեր» դաշտը նպատակային օգտագործման համար կարելի օգտվել հուշարարից, որին սեղմելու արդյունքում կբացվի ֆայլեր օգտագործելու հնարավորության մասին ուղղորդում (նկ. 5):



Նկ. 5

Այսպիսով, «Հանձնարարություն» գործունեության «Հիմնական» բաժնում ներկայացվում է ամբողջ հանձնարարությունը (առաջադրանքը):

«Հանձնարարություն» գործունեության «Հասանելիություն» բաժնում սահմանվում են առաջադրանքի կատարման ժամկետները՝ ամսաթվով և ժամանակով (նկ. 6):

**Հասանելիություն**

Թույլատրել առաջադրանքի ներկայացում ...ից	<input checked="" type="checkbox"/> Միացնել	18	փետրվարի	2024	00	00	🗄
Վերջնաժամկետ	<input checked="" type="checkbox"/> Միացնել	25	փետրվարի	2024	00	00	🗄
Անջատման ամսաթիվ	<input type="checkbox"/> Միացնել	18	փետրվարի	2024	18	11	🗄
Հիշեցրու ինձ գնահատել ըստ	<input checked="" type="checkbox"/> Միացնել	3	մարտի	2024	00	00	🗄

Միշտ ցույց տալ նկարագրությունը ?

Նկ. 6

Այս բաժնում նախապես սկստիվ վիճակում են (այսինքն միացված վիճակում են)։

- առաջադրանքի սկսելու ժամանակը («Թույլատրել առաջադրանքի ներկայացում ...ից»), որը նկ. 6-ի օրինակում տեղադրված է փետրվարի 18-ի 00:00 ժամը, այս ժամանակի սկստիվ լինելը նշանակում է, որ ուսանողները չեն կարողանա իրենց պատասխաններն ուղարկել մինչ այդ ժամանակը (սկստիվ չլինելու դեպքում ուսանողները կարող են անմիջապես պատասխաններն ուղարկել),
- վերջնաժամկետը, որը նկ. 6-ի օրինակում տեղադրված է փետրվարի 25-ի 00:00 ժամը, դա այն ժամանակն է, երբ հանձնարարականը պետք է սվարտվի:
- դասախոսին հիշեցնելու ամսաթիվը («Հիշեցրու ինձ գնահատել ըստ»), որը նկ. 6-ի օրինակում տեղադրված է մարտի 3-ի 00:00 ժամը, դա նշանակում է, որ ներկայացումների նշումը պետք է սվարտվի մինչև այդ ժամանակը և այն օգտագործվում է վահանակի ծանուցումները դասախոսների համար առաջնահերթ նշանակելու համար:


Եթե առաջադրանքի կատարման ժամկետների վրա սահմանափակումներ չենք ցանկանում դնել, ապա անջատում ենք նշված պայմանները «Միացնել» նշիչը հանելով:

Այս բաժնի «Անջատման ամսաթիվ» պայմանն ի սկզբանե միացված չէ և դա նշանակում է, որ առաջադրանքի կատարումը և պատասխանն ուղարկելը ուսանողի համար մնալու է հասանելի նույնիսկ վերջնաժամկետից հետո, ույն ուղղակի նշվելու է որպես ուշացած պատասխան և

առաջադրանքի գնահատումը կախված է դասախոսի որոշումից: Այս պայմանը միացնելու դեպքում նշված ժամանակին առաջադրանքին պատասխանելը ուսանողի համար կդառնա անհասանելի:

Այս բաժնի (նկ. 6) վերջին լուծյամբ միացված նշիչը՝ «Միշտ ցույց տալ նկարագրությունը» փաստում է, որ առաջադրանքի նկարագրությունն ուսանողի համար միշտ տեսանելի: Այդ նշիչի անջատված ռեժիմը նշանակում է, որ առաջադրանքն ուսանողին տեսանելի կդառնա առաջադրանքը ներկայացման թույլատրելու ժամանակից հետո (նկ.6-ում հասանելիության առաջին տողը):

«Հանձնարարություն» գործունեության հաջորդ բաժինը սահմանում է **պատասխանների ներկայացման ձևաչափը** (նկ.7):



Նկ. 7

Այս բաժնի «Պատասխանների ներկայացման տարատեսակներ» տողում որոշում ենք առաջադրանքի ներկայացման ձևը՝ առցանց և/կամ ֆայլերի միջոցով (նկարի օրինակում ընտրված է առաջադրանքի ֆայլերով ներկայացնելու տարբերակը): Անհրաժեշտության դեպքում կարող ենք նաև երկու տարբերակներն էլ կիրառել, մասնավորապես «առցանց տեքստ» տարբերակի ընտրության դեպքում ուսանողներն իրենց ներկայացման համար կարող են տեքստ մուտքագրել անմիջապես խմբագրի դաշտում:

«Վերբեռնված ֆայլերի առավելագույն քանակը» տողում կառավարում ենք կցվող ֆայլերի քանակը, իսկ հաջորդ «Ներկայացման առավելագույն չափը» տողում սահմանում ենք ներկայացվող ֆայլերի ծավալը, նաև կարող ենք սահմանափակել ընդունվող ֆայլերի տեսակները (օրինակ կարող ենք թույլատրել միայն .pdf ընդլայնմամբ մինչև 500 մեգաբայթ ծավալով առավելագույնը 5 ֆայլի վերբեռնում):



«Հանձնարարություն» գործունեության հաջորդ բաժինների (նկ.8) միջոցով սահմանում ենք ուսանողի հետ համագործակցելու հավելյալ պայմանները, մասնավորապես.

Նկ.8.1	> Հետադարձ կապի տեսակներ
Նկ.8.2	> Ներկայացման կարգավորումներ
Նկ.8.3	> Խմբի ներկայացման կարգավորումներ
Նկ.8.4	> Ցանուցումներ
Նկ.8.5	> Գնահատական
Նկ.8.6	> Մոդուլի ընդհանուր կարգաբերումներ
Նկ.8.7	> Սահմանափակել մուտքը
Նկ.8.8	> Գործունեության ավարտը
Նկ.8.9	> Ունակություններ

Նկ. 8

- ուսանողների հետ հետադարձ կապի տեսակները. դրանք են մեկնաբանություն (եթե միացված է, նշանակում է, որ մեկնաբանությունները կկցվեն յուրաքանչյուր ներկայացման համար), pdf ֆայլով ծանոթագրություն (լռությամբ միացված է, ինչը հնարավորություն է տալիս դասախոսին առաջադրանքների ներկայացումները նշելիս ավտոմատ ստեղծել ծանոթագրության pdf խմբագրվող ֆայլեր), հետադարձ կապի ֆայլեր (եթե միացված է, նշանակում է, որ դասախոսը առաջադրանքները նշելու ժամանակ կարող է հետադարձ կապով վերբեռնել տարբեր ֆայլեր), առցանց գնահատման աշխատաթերթ (եթե միացված է, ապա դասախոսը կարող է ներբեռնել և վերբեռնել ուսանողի գնահատականներով աշխատանքային թերթիկ): Այս բաժնում հետադարձ կապի համար լռությամբ ընտրված է «pdf ֆայլով ծանոթագրություն» տարբերակը (նկ. 8.1),
- ուսանողի կողմից իրականացված առաջադրանքի ներկայացման կարգավորումները (նկ. 8.2), որոնք հնչում են պահանջների տեսքով, այն է ուսանողից պահանջել սեղմել ուղարկել կոճակը, թե ոչ, ընդունել ներկայացման հայտարարությունը, թե ոչ, նաև կարգավորել նոր փոձեր թույլատրելու հնարավորությունը,
- խմբային աշխատանք կատարելու հնարավորությունը (նկ. 8.3),
- ուսանողներին գնահատականների ներկայացման, գնահատականների ուշացման մասին ծանուցումներ ներկայացնելու պայմանները (նկ. 8.4):

**Հետադարձ կապի տեսակներ**

Հետադարձ կապի մեկնաբանություններ  PDF ծանոթագրություն  Հետադարձ կապի ֆայլեր

Անցանց գնահատման աշխատաթերթ

Նկ. 8.1

**Ներկայացման կարգավորումներ**

Ուսանողներից պահանջեք սեղմել ուղարկել կոճակը

Ուսանողներից պահանջեք ընդունել ներկայացման հայտարարությունը

Թույլատրել նոր փորձեր

Երբեք  
Ինքնուրույն  
Ավտոմատ կերպով (մինչև անցողիկ գնահատականը)

Նկ. 8.2

**Խմբի ներկայացման կարգավորումներ**

Ուսանողների խմբային պատասխան

Նկ. 8.3

**Ցանուցումներ**

Ծանուցել գնահատականներին ներկայացումների մասին

Ծանուցել գնահատականներին ու՛ ներկայացման մասին

«Տեղեկացնել ուսանողներին» կանխադրված կարգավորումը

Նկ. 8.4

«Հանձնարարություն» գործունեության կառավարման գործընթացում պարտադիր խմբագրման ենթակա և կարևոր բաժիններ են **«Գնահատական»** (նկ. 8.5) և **«Գործունեության ավարտ»** (8.8) բաժինները:

**«Գնահատական»** բաժնում կարգավորվում է գնահատման գործընթացը (նկ.8.5): Այս բաժնում սահմանվում է առավելագույն գնահատականը և անցողիկ գնահատականը: Բացի անցողիկ գնահատականից այս բաժնի բոլոր դաշտերն ունեն լրությամբ արժեքներ և անհրաժեշտության բացակայության դեպքում կարող են նաև չխմբագրվել: Առավելագույն գնահատականը լրությամբ տեղադրված է 20 և անհրաժեշտության դեպքում կարելի է փոխել, անցողիկ գնահատականը ներմուծվում է դասախոսի կողմից: Դաշտի նախավերջին հրահանգով դասախոսը կառավարում է հանձնարարության վերահսկողի հասանելիությունը ուսանողի համար: Վերջինս նույնպես լրությամբ ընդունում է արժեք, որը բացի բացառիկ դեպքերից խմբագրման կարիք չունի:

Ն.և. 8.5

«Գործունեության ավարտը» բաժնում սահմանում ենք գնահատման փուլի ավարտի պայմանները: Գնահատում կիրառելու դեպքում ցանկյալի է գործունեության ավարտը սահմանել գնահատամամբ: Բաժինն առաջարկում է ավարտի 3 տարբերակ (նկ. 8.8.1), որոնք հանդես են գալիս փոխանջատիչի սկզբունքով:

Երեք տարբերակներից առաջինի ընտրության դեպքում ավարտի համար հատուկ պայմաններ չեն հաստատվում (նկ. 8.8.1):


Նկ. 8.8.1

Երկրորդ տարբերակի ընտրության դեպքում (նկ. 8.8.2) բացվում է ավարտի ժամանակը նշելու պատուհանը, որի «միացնել» նշիչը ընտրելուց տրվում է ժամանակը խմբագրելու հնարավորություն:

Նկ. 8.8.2

Գործունեության ավարտը գնահատակով ավարտելու համար «Գործունեության ավարտ» բաժնում միացնում ենք «Ցույց տալ գործունեությունը որպես ավարտված, երբ պայմանները բավարարված են» ռեժիմը, ինչի արդյունքում ենթակայությամբ բացված տարբերակներում (նկ.8.8.3) միացնելով «Մասնակիցը պետք է գնահատական ստանա այս գործունեությունը ավարտելու համար» նշիչը՝ ենթակայությամբ բացվում են երկու տարբերակներ՝ գնահատականի միավորը որոշելու համար: Եթե նախատես սահմանել ենք անցողիկ գնահատական, ապա այդ երկու տարբերակներից ընտրում ենք «Այս աշխատանքը ավարտելու համար ուսանողը պետք է գնահատական ստանա» տարբերակը, որի դեպքում որպես սահմանային շեմ կընտրվի անցողիկ գնահատականը, իսկ եթե չենք սահմանել անցողիկ գնահատական, ապա ընտրում ենք «ցանկացած գնահատական» տարբերակը:

Եվ բաժնի վերջում նշիչի ակտիվացումով կարող եք կառավարել առհասարակ գործունեության ավարտը ուսանողների համար:




Նկ. 8.8.3

Եվ բաժնի վերջում նշիչի ակտիվացումով կարող եք կառավարել առհասարակ գործունեության ավարտը ուսանողների համար:

Գործունեության խմբագրումը պահպանելու համար ընտրում ենք նկ. 9-ում ցուցադրված առաջին երկու տարբերակներից որևէ մեկը՝ ելնելով այդ պահին հաջորդ քայլերի տրամաբանությունից: Խմբագրումը ջնջելու և չպահպանելու համար ընտրում ենք երրորդ՝ «Չեղարկել» տարբերակը:






Նկ. 9


Խմբագրման կամ փոփոխությունների վերաբերյալ ուսանողներին տեղեկացնելու համար կարող ենք ակտիվացնել «ուղարկեք բովանդակության փոփոխության ծանուցում» նշիչը:

«Հանձնարարության» կարգաբերումները տեղադրելուց և անհրաժեշտ պայմանները սահմանելուց հետո այն դասախոսի էջում ունենում է հետևյալ տեսքը (նկ. 10), տեղադրված առաջադրանքը նույն տեսքն ունի նաև ուսանողի էջում:



Նկ. 10

Ուսանողը «Առաջադրանք 1» գործունեության վրա սեղմելու դեպքում անցնելու է առաջադրանքին պատասխանելու ռեժիմ (նկ.11):



Նկ. 11

Այստեղ ուսանողը տեսնում է հանձնարարության վերաբերյալ որոշակի տեղեկատվություն՝ ժամկետը, առաջադրանքի ֆայլը, պատասխանած անձանց քանակը և այլն: Առաջադրանին պատասխանելու համար ուսանողը սեղմելու է «Ավելացնել առաջադրանքի պատասխանը» (նկ.11) ստեղծի վրա և բացված համապատասխան էջում նա որպես պատասխան կցելու է իր պատասխանի pdf ֆորմատով ֆայլը (այսպիսի պարամետրեր ենք դրել նախապես), որտեղից վերադառնալով առաջադրանքի պատուհան (նկ.12) տեսնելու է, որ իր պատասխանի ֆայլը կցված է, ընդորում առաջադրանքի պատուհանում այս դեպքում արդեն բացվում են երկու գործիքներ, որոնք թույլ են տալու ուսանողին խմբագրել իր պատասխանը, կամ հեռացնել պատասխանը: Առաջադրանքի խմբագրման հնարավորությունը պահպանվում է մինչև առաջադրանքի ժամկետի ավարտը:

**Առաջադրանք 1**

Ե՞՞՞< Իջևանի մասնաճյուղ > 2023-2024 1 կիսամյակ > Բնագիտական ֆակուլտետ > Ավտոմատներ հաշվալ

Կատարել՝ Մտացոլ գնահատական Կատարել՝ Մտացոլ անցողիկ գնահատական

Բացված է՝ երկուշաբթի, 19 փետրվարի 2024, 12:00 AM  
Վերջնաժամկետ՝ երկուշաբթի, 26 փետրվարի 2024, 12:00 AM

Իտղիքներ ռեկուրսիվ ֆունկցիաների և Թյուրինգի մեքենաների վերաբերյալ:  
Aragadrang\_1.docx 19 փետրվարի 2024, 12:53 AM

Խմբագրել ներկայացումը <հեռացնել ներկայացումը

**Գրանցման կարգավիճակ**

Պատասխանի կարգավիճակ	Ներկայացված է գնահատման
Գնահատման կարգավիճակ	Չի գնահատվում
Մնացել է ժամանակը	<անձնադրականը ներկայացվել է 6 Օրեր 22 ժամեր շուտ
Վերջին փոփոխությունը	երկուշաբթի, 19 փետրվարի 2024, 1:06 AM
Ֆայլերի ներկայացումներ	Aragadrang_1.pdf 19 փետրվարի 2024, 1:06 AM

Նկ. 12

Դասախոսը առաջադրանքի ավարտի ժամկետը լրանալուց հետո (կարող է նաև ընթացքում) «Առաջադրանք 1» գործունեության վրա սեղմելով մտնելու է առաջադրանքի գնահատման ռեժիմ (նկ. 13):

**Առաջադրանք 1**

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ > Ինֆորմատի > Ավտոմատներ հաշվարկելիություն լուծելիություն

Ստացե՛ք գնահատական Ստացե՛ք անցողիկ գնահատական

**Բացված է՝** երկուշաբթի, 19 փետրվարի 2024, 12:00 AM  
**Վերջնաժամկետ՝** երկուշաբթի, 26 փետրվարի 2024, 12:00 AM

Իտելիքներ երկուրսիվ ֆունկցիաների և Թյուրինգի մեքենաների վերաբերյալ:  
 Արագdrang\_1.docx 19 փետրվարի 2024, 12:53 AM

Դիտել բոլոր ներկայացումները **Գնահատական**

**Գնահատման ամփոփում**

Թարփված ուսանողներից	Ոչ
Մասնակիցներ	26
Ներկայացվել է	1
Գնահատման կարիք ունի	1
Մնացել է ժամանակը	6 Օրեր 22 Ժամեր

Նկ. 13

Դասախոսի համար առաջադրանքի էջում նույնպես հանձնարարության վերաբերյալ հակիրճ հաշվետվություն է ներկայացված՝ մասնակիցների քանակը, ներկայացված պատասխանների քանակը, գնահատման ենթակա ֆայլերի քանակը և ժամկետը (նկ. 13): Այս էջից առաջադրանքների ստուգման և գնահատման համար անցնում ենք կամ «Գնահատական» հրահանգով, կամ «Դիտել բոլոր ներկայացումները» հրահանգով:

Ընտրելով «Գնահատական» հրահանգը անմիջապես բացվում է առաջադրանքների գնահատման պատուհանը (նկ.15), որտեղ հասանելի են բոլոր մասնակիցները՝ սկսած առաջին համարից:

Ընտրելով «**Դիտել բոլոր ներկայացումները**» հրահանգը բացվում է դասընթացի մասնակիցների ցանկը (նկ.14), որում «Կարգավիճակ» սյունում կանաչ գույնի ֆոնով առանձնացված են այն մասնակիցները, ովքեր ունեն ներկայացրած աշխատանք և սպասում են գնահատման, կամ արդեն գնահատվել են, և այդ մասնակիցների համար նախավերջին սյունակում ներկայացված է նրանց կողմից առաջադրանքը կատարելու կամ վերջին անգամ փոփոխելու ամսաթիվը, իսկ գնահատված մասնակիցների համար վերջին սյունակում ներկայացված է գնահատման արդյունքում ավտոմատ ստեղծված «PDF ծանոթագրությունը» (նկ. 16-ի օրինակով):

Ընտրել	Օգտավիճակ նկար	Անուն / Ազգանուն	Էլ.փոստի հասցե	Բաժին	Կարգավիճակ	Գնահատական	Խմբագրել
<input type="checkbox"/>		Կորյուն Աթեկյան	koryun.atabekyan@edu.yasu.am	Բնֆորմատիկա (համակարգչային գիտություն)	Պատասխաններ կան	Գնահատական	Խմբագրել
<input checked="" type="checkbox"/>		Մարիետա Շաղարյան	marieta.chagaryan@ysu.am		Ներկայացված է գնահատման Գնահատված	Գնահատական 12:00 / 20:00	Խմբագրել

Վերջին փոփոխությունը (ներկայացումը)	Ֆայլերի ներկայացումներ	Վերջին փոփոխությունը (լսարան)	PDF ծանոթագրու
երկուշաբթի, 19 փետրվարի 2024, 1:06 AM	<a href="#">Aragadrang_1.pdf</a> 19 փետրվարի 2024, 1:06 AM	երկուշաբթի, 19 փետրվարի 2024, 2:06 AM	<a href="#">Մարիետա</a> <a href="#">Դիտել ծանոթագր</a>


**Նկ. 14**

Ներկայացված ցանկից ընտրում ենք այն մասնակցին, որի աշխատանքը ցանկանում ենք դիտել/գնահատել (սեղմում ենք նրա անվան ուղղությամբ տեղադրված «Գնահատական» ստեղծ, որից հետո բացվում է առաջադրանքների գնահատման նույն պատուհանը՝ նկ.14), այս դեպքում նույնպես բոլոր մասնակիցները հասանելի են (այսինքն բացվում է նույն աշխատանքային պատուհանը, միայն նախապես ցուցադրվում է ընտրված մասնակցի աշխատանքը):

Առաջադրանքների գնահատման պատուհանը (նկ. 15) pdf տիպի ֆայլերի դեպքում իրենից ներկայացնում է խմբագրման գործիքներով դաշտ, որում բացված է մասնակցի ներկայացրած ֆայլը: Այս պատուհանի աջ մասում տեղեկատվություն է մասնակցի ներկայացրած առաջադրանքի




ընթացիկ կարգավիճակի («ներկայացված է գնահատման», «չի գնահատվում»), ներկայցման ժամկետի պահպանման, առաջադրանքի համար ստանալիք (կամ ստացած) գնահատակի վերաբերյալ և այլն:



Նկ. 15

Այստեղ խմբագրման գործիքների՝ մեկնաբանությունների, գծերի, գրիչի, ընդման միջոցով կատարում ենք անհրաժեշտ նշումներ առաջադրանքի իրականացման և առկա սխալների վերաբերյալ (նկ. 16), համապատասխան դաշտում գրում ենք գնահատականը, որը ստանում է մասնակիցը առաջադրանքի համար:




Նկ. 16

Եթե պատասխանը դեռ փոփոխության ենթակա է, սպա գնահատման կարիք չկա, պարզապես անհրաժեշտ է կատարել դիտողություններ և ուղղորդումներ և պահպանել փոփոխությունը:

Առաջադրանքի պատուհանի ներքևում տեղադրված նշիչի ակտիվացմամբ ծանուցում ենք ուսանողին առաջադրանքի ստուգման մասին: Առաջադրանքի ստուգման և գնահատման գործընթացն ավարտելուց հետո ըստ անհրաժեշտության սեղմում ենք ակտիվ 2 ստեղներից մեկը:




**«Պահպանել փոփոխությունները»** ստեղը սեղմելու արդյունքում կատարված փոփոխությունները պահպանվում են, վերաբացվում է նույն մասնակցի առաջադրանքի ստուգման պատուհանը՝ փոփոխված տեղեկատվությամբ, այն է աջ մասի պատուհանն արդեն հայտարարում է, որ առաջադրանքը գնահատված է և ուսանողին կցված է դասախոսի անունից համակարգի կողմից սկսումատ ստեղծված PDF պատասխան ֆայլը (նկ. 17):



Նկ. 17

**«Պահել և ցույց տալ հաջորդը»** ստեղը սեղմելուց հետո փոփոխությունները տվյալ մասնակցի համար գրանցվում են և հետո անմիջապես բացվում է հաջորդ մասնակցի առաջադրանքը՝ գնահատելու համար:

Առաջադրանքը նայելուց կամ գնահատելուց հետո ուսնողի էջում որպես հետադարձ կապ կալվեանա դասախոսի կողմից ուղարկված կարծիքը (նկ. 18):

<b>Գրանցման կարգավիճակ</b>	
Պատասխանի կարգավիճակ	Ներկայացված է գնահատման
Գնահատման կարգավիճակ	Գնահատված
Մնացել է ժամանակը	Հանձնարարականը ներկայացվել է 6 Օրեր 22 ժամեր շուտ
Վերջին փոփոխությունը	երկուշաբթի, 19 փետրվարի 2024, 1:06 AM
Ցայլերի ներկայացումներ	 <a href="#">Aragadrang_1.pdf</a> 19 փետրվարի 2024, 1:06 AM
<b>Հետադարձ կապ</b>	
Գնահատական	12:00 / 20:00
Գնահատված	երկուշաբթի, 19 փետրվարի 2024, 3:18 AM
Դասակարգված է	 Մարիետա Շաղարյան
PDF ծանոթագրություն	 <a href="#">Մարիետա Շաղարյան_313727_0.pdf</a> 19 փետրվարի 2024, 2:06 AM <a href="#">Դիտեք ծանոթագրված PDF...</a>


### Նկ. 18

Դասախոսի կողմից առաջարկված փոփոխություններն իրականացնելու համար թույլատրելի ժամկետում ուսանողը կարող է խմբագրել իր ներկայացումը/առաջադրանքը:

Բոլոր խմբագրումներն ավարտելուց հետո, կամ ժամկետի ավարտից հետո դասախոսը կարող է նկ.14-ի «գնահատական» հրամանով անցնել և գնահատել ուսանողին, եթե մինչ այդ չի գնահատել, կամ ուսանողը վերանայել է իր ներկայացումը և նորը ուղարկել:

Գնահատումից հետո ըստ յուրաքանչյուր ուսանողի հաշվետվությունները ներկայացվում են համապատասխանաբար դասախոսի էջում (նկ.19) և ուսանողի էջում (նկ.18), որոնք գնահատումից հետո ներառում են նաև «Հետադարձ կապ» բաժինը (սկզբից առաջադրանքի գնահատման պատուհանը ունեցել է դասախոսի համար նկ.13-ի տեսքը, իսկ ուսանողի համար նախ նկ.11-ի, ապա նկ.12-ի տեսքը):

[Հանձնարարություն](#)
[Կորգավորումներ](#)
[Ընդլայնված գնահատում](#)
[Ավելին](#)


**Առաջադրանք 1**
ԵՊՀ Ինժե...

> Ավտոմատներ հաշվարկելիություն լուծելիություն (գո...


Ստացեք գնահատական    Ստացեք անցողիկ գնահատական

**Քաջված է՝** երկուշաբթի, 19 փետրվարի 2024, 12:00 AM  
**Վերջնաժամկետ՝** երկուշաբթի, 26 փետրվարի 2024, 12:00 AM


Խնդիրներ ռեկուրսիվ Ֆունկցիաների և Թյուրինգի մեքենաների վերաբերյալ:  
 ... [Aragadrang\\_1.docx](#) 19 փետրվարի 2024, 12:53 AM

[Դիտել բոլոր ներկայացումները](#)    [Գնահատական](#)

### Գնահատման ամփոփում

Թաքնված ուսանողներից	Ոչ
Մասնակիցներ	26
Ներկայացվել է	1
Գնահատման կարիք ունի	0 
Մնացել է ժամանակը	6 Օրեր 19 Ժամեր


### Հեռադարձ կապ

Գնահատական	12:00 / 20:00
Գնահատված	երկուշաբթի, 19 փետրվարի 2024, 3:18 AM
Դասակարգված է	 Մարիետա Ճաղարյան
PDF ծանոթագրություն	<a href="#">Մարիետա Ճաղարյան_313727_0.pdf</a> 19 փետրվարի 2024, 2:06 AM <a href="#">Դիտեք ծանոթագրված PDF...</a>

Նկ. 19

E-learning առցանց ուսուցման համակարգը դասախոսին հնարավորություն է տալիս ստանալու ամփոփ հաշվետվություններ ուսանողների ընթացիկ ձեռքբերումների վերաբերյալ: Դրա

համար դասընթացի կառավարման էջի գլխավոր մենյուում (նկ.20) ընտրում ենք «Գնահատականներ» ռեժիմը:



Նկ. 20

Արդյունքում բացվում է այդ պահի դրությամբ բոլոր տեսակի հանձնարարություններից ուսանողների ձեռքբերած միավորները (նկ. 21): Այն յուրաքանչյուր հանձնարարության համար ներկայացնում է յուրաքանչյուր ուսանողի վաստակած միավորը, վերջում միջին գնահատականը:

Մվտոմասներ հաշվարկելիություն լուծելիություն (գործն.) (Առկա-Քնագ. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա Բ2 (ԻԿՄ 2))


ԵՊՀ Իջևանի մասնամուղ > 2023-2024 1 կիսամյակ > Բնագիտական ֆակուլտետ > Առկա-Քնագ. Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) (Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա Բ2 (ԻԿՄ 2)) > Գնահատողի հ

Գնահատողի հարդրագրություն < Դրոնեկ օգտատերերին Զտեկ ըստ անունով <

Անուն / Ազգանուն	Էլ փոստի հասցի	Թափն	Վաստակած միավորներ	Մնացորդային 1	Մնացորդային 2	Միջին
ՄԱ Կորյուն Աթաբեկյան	koryun.atabekyan@edu.yu.am	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	18:00	-	-	18:00
ՄԱ Սարգիս Ալավերդյան	sargis.alaverdyan@edu.yu.am		-	-	-	-
Ընդհանուր միջինը			18:00	-	-	18:00

Նկ. 21

Ուսանողը նույնպես հնարավորություն ունի ստանալու ամփոփ տեղեկատվություն հանձնարարություններից իր ընթացիկ ձեռքբերումների վերաբերյալ: Դրա համար դասընթացի կառավարման էջի գլխավոր մենյուում (նկ.22) ուսանողն ընտրում է «Գնահատականներ» ռեժիմը,



Նկ. 22

արդյունքում բացվում է այդ պահի դրությամբ բոլոր տեսակի հանձնարարություններից ուսանողի վաստակած միավորը, սովորը առավելագույն միավորի նկատմամբ, դասընթացի ընդհանուր ներդրումը՝ արտահայտված սովորներով, իսկ ցանկի ներքևում ներկայացվում է ուսանողի ընթացիկ միջին գնահատականը և նրա սովորը առավելագույն միավորի մեջ (նկ. 23):

**Ավտոմատներ հաշվարկելիություն լուծելիություն (գործն.) (Առկա-Քնագ. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա Բ2 (ԻԿՄ 2))**

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ > 2023-2024 1 կիսամյակ > Բնագիտական ֆակուլտետ > Առկա > Բակալավր Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) (Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա) > Ինֆորմատիկա > Օգտատիրոջ հաշվետվություն

**Օգտատիրոջ հաշվետվություն** ✓

**Մարինա Ճաղարյան**

Գնահատվող միավոր	Համակշիռ	Գնահատական	Ծաբբ	Տոկոս	Դիտողություն	Դասընթացի ընդհանուր ներդրումը
▼ Ավտոմատներ հաշվարկելիություն լուծելիություն (գործն.) (Առկա-Քնագ. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա Բ2 (ԻԿՄ 2))						
ՎՆՏԱՆԱԿԱՐԴՈՒԹՅՈՒՆ Հանձնարարություն	50:00 %	✓ 19:00	0-20	95:00 %	-	47:50 %
ՎՆՏԱՆԱԿԱՐԴՈՒԹՅՈՒՆ Առաջադրանք 1	50:00 %	✓ 12:00	0-20	60:00 %	-	30:00 %
ՎՆՏԱՆԱԿԱՐԴՈՒԹՅՈՒՆ Առաջադրանք 2	0:00 % (Դատարկ)	-	0-20	-	-	0:00 %
ՆԱԹԵՎԱԿՈՐՈՒՄ Դասընթացների ընդհանուր թիվը	-	15:50	0-20	77:50 %	-	-

Նկ. 23




**ԳՆԱՀԱՏՈՒՄ ԳՈՐԾՆՆԹԱՑԸ ՀԱՄԱԿԱՐԳԻ**  
**«ՎԻԿՏՈՐԻՆԱ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

«Վիկտորինա» գործունեությունն ըստ էության դա թեստերի միջոցով ուսանողների ձեռքբերումները ստուգելու միջոց է: Այս գործիքը հնարավորություն է տալիս դասախոսին կազմել թեստեր՝ օգտագործելով հարցերի տարբեր տեսակներ (բազմակի ընտրությամբ, կարճ պատասխանով, «ճիշտ-սխալ» պատասխանով, թվային և այլն): Թեստերը կարող են օգտագործվել քննության ժամանակ, թեմաներն ամփոփելու և ինքնագնահատման նպատակով:



«Վիկտորինա» գործունեությունն ավելացնելու համար դասընթացի խմբագրման ռեժիմում գործունեությունների կցման պատուհանից (նկ.3) ընտրում ենք «Վիկտորինա» գործունեությունը, որից հետո էկրանին բացվում է վիկտորինա կամ թեստ ստեղծելու խմբագրման պատուհանը, որը սրբանադրում է թեստը ձևակերպելու, կատարման պայմաններ սահմանելու և գնահատման ձևաչափը ներկայացնելու բաժինները (նկ. 24, 25) :

Դիտարկենք վիկտորինայի էջի բաժինների կառուցվածքը և լրացնելու պայմանները:

«Վիկտորինա» էջի **հիմնական բաժինը** (նկ.24) ներառում է «Վիկտորինայի անուն» պարտադիր լրացման դաշտը (օրինակ՝ Թեստ 1) և «Նկարագրություն» դաշտը, որը, օրինակ կարող է հակիրճ ներկայացնել թեստի բովանդակությունը: Նկարագրություն դաշտը դասընթացի էջում կարող է բացակայել, կամ կարող է ցուցադրվել: Նկարագրություն դաշտում տեղադրված ինֆորմացիան դասընթացի էջում ցուցադրելու համար խմբագրման դաշտի ներքևում ընտրում ենք նշիչը:



Նկ. 24

> <b>ingամանակացույց</b>
> <b>Գնահատական</b>
> <b>Դասավորություն</b>
> <b>Հարցերի վարքագիծ</b>
> <b>Վերանայման ընտրանքները</b> 
> <b>Արտաքին տեսք</b>
> <b>Safe Exam Browser</b>
> <b>Փորձերի լրացուցիչ սահմանափակումներ</b>
> <b>Ընդհանուր հետադարձ կապ</b> 
> <b>Մոդուլի ընդհանուր կարգաբերումներ</b>
> <b>Սահմանափակել մուտքը</b>
> <b>Գործունեության ավարտը</b>
> <b>Ունակություններ</b>

Նկ. 25

**Ժամանակացույց** բաժինը (նկ.26) ներառում է վիկտորինան բացելու և փակելու ժամանակները և վիկտորինայի հարցերին պատասխանելու տևողությունը սահմանող դաշտերը, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտության դեպքում ակտիվացվում է «Միացնել» նշիչի ընտրությամբ:

- «Բացել վիկտորինան» տողում տեղադրում ենք այն ժամանակը, որից սկսած թեստը բացվում է ուսանողների կողմից պատասխանելու համար:
- «Փակել վիկտորինան» տողը միացնելու և այնտեղ ժամանակ տեղադրելու դեպքում սահմանում ենք ուսանողների կողմից թեստ մուտք գործելու հնարավորությունը փակելու ժամանակը: Նշված ժամանակից հետո թեստ մուտք գործելը ուսանողների համար կլինի փակ և այն կփակվի անգամ թեստին պատասխանելու ժամանակ: Այս ռեժիմը չմիացնելու դեպքում թեստին հասանելիության ժամկետը դառնում է անսահմանափակ, այսինքն մնում է ուսանողի հայեցողությամբ՝ երբ ցանկանա:
- Հաջորդ «Ժամկետային սահմանափակում» տողում, որը սովորաբար լրությամբ միացված է լինում, տեղադրում ենք վիկտորինայի հարցերին պատասխանելու համար հստակացվող ժամանակահատվածը՝ արտահայտված շաբաթներով, օրերով, ժամերով, րոպեներով և վայրկյաններով: Այն սկսում է հետադարձ հաշվարկ կատարել, երբ ուսանողը մուտք է գործում թեստին պատասխանելու ռեժիմ:

- «Երբ ժամանակը լրանում է» տողում ընտրում ենք առաջարկվող երեք տարբերակներից մեկը, թեստի համար տրամադրված ժամանակահատվածի հետ կապված լրացուցիչ կարգավորումներ սահմանելու համար, մասնավորապես, ընտրելով 2-րդ տարբերակը («Գոյություն ունի արտոնյալ ժամանակահատված, երբ հնարավոր է բաց փորձեր ներկայացնել, բայց այլևս ոչ մի հարցի պատասխան չի տրվել») բացվում է նոր պատուհան արտոնյալ ժամանակահատված ներկայացնելու համար:

Նկ. 26


«Գնահատական» բաժնում (նկ.27) որոշում ենք անցողիկ գնահատականը և թեստին պատասխանելու թույլատրելի փորձերի քանակը, որը լռությամբ տեղադրված է լինում 1:

Նկ. 27

Համակարգը հնարավորություն է տալիս փոխել և տեղադրել առաջարկվող 2-10 թվերից որևէ մեկը, որը կտա դասախոսի կողմից որոշվող փորձերի քանակը, կամ «անսահմանափակ»: Այս տարբերակների դեպքում նոր բացված տողում որոշում ենք «գնահատման եղանակը», այսինքն

վերջնական միավորի ստացման եղանակը. ամենաբարձր միավորը, միջին գնահատականը, առաջին փորձի արդյունքը, վերջին փորձի արդյունքը:


«**Դասավորություն**» բաժնում (նկ.28) որոշում ենք պատասխանելու ժամանակ թեստում ներառված հարցերի ցուցադրման ձևը: Լուրջամբ տեղադրված է «Յուրաքանչյուր հարց՝ նոր էջ» տարբերակը, այսինքն թեստի յուրաքանչյուր հարցը բացվելու է նոր էջում:



Նկ. 28

Առաջարկվում են նաև այլ շատ տարբերակներ, որոնցից առաջինը՝ «Երբեք, բոլոր հարցերը մեկ էջում» տարբերակը հայտարարում է, որ պատասխանելուց բոլոր հարցերը բացվելու են մեկ էջում, մնացած տարբերակները որոշելու են մեկ էջում ցուցադրվող հարցերի քանակները:

«**Հարցերի վարքագիծ**» բաժնում (նկ.29) կարգավորում ենք թեստում ներառված հարցերի ցուցադրման կարգը. լուրջամբ այն տեղադրված է «Խառնաշփոթ հարցերում՝ այո» տարբերակը, ինչը նշանակում է ամեն անգամ պատասխանելու ժամանակ թեստի հարցերը կցուցադրվեն տարբեր կարգով (խառը):



Նկ. 29

Հաջորդ բաժիններում սահմանվում են թեստի արտաքին տեսքը, լրացուցիչ սահմանափակումները, մոդուլի ընդհանուր կարգաբերումները (նկ.30) և այլն:

**Արաարին տեսք**

Յուցադրել օգտատիրոջ նկարը

Տասնորդական տեղերը գնահատականներում

Տասնորդական տեղերը հարցի գնահատականներում

**Փորձերի լրացուցիչ սահմանափակումներ**

Պահանջվում է գաղտնաբառ

Պահանջվում է ցանցային հասցե

Պարտադիր ձգձգում 1-ին և 2-րդ փորձերի միջև    Միացնել

**Մոդուլի ընդհանուր կարգաբերումներ**

Հասանելիություն

Նույնականացման համար


Պարտադիր լեզու

Խմբային աշխատակերպ

Ավելացնել խմբի/խմբավորման մուտքի սահմանափակում

Նկ. 30


«Ընդհանուր հետադարձ կապ» (նկ.31) հրահանգը տալուց հետո էկրանին բացված պատուհանում որոշում ենք ուսանողների հետ հետադարձ կապի բովանդակությունը, մասնավորապես, այն մեկնաբանությունները, որոնք պետք է ընդհանուր ներկայացվեն ուսանողներին «Ճիշտ», «մասամբ ճիշտ» և «սխալ» պատասխանների դեպքում:



Նկ. 31

«Գործունեության ավարտ» բաժինն ունի նույն կառուցվածքը և բովանդակությունը, ինչպես «Հանձնարարություն» գործունեության համար (Տես էջ. 9):

«Վիկտորինա» գործունեության խմբագրումը պահպանելու համար ընտրում ենք նկ. 32-ում ցուցադրված առաջին երկու տարբերակներից որևէ մեկը՝ ելնելով այդ պահին հաջորդ քայլերի տրամաբանությունից: Խմբագրումը ջնջելու և չպահպանելու համար ընտրում ենք երրորդ՝ «Չեղարկել» տարբերակը:




Նկ. 32

Խմբագրման կամ փոփոխությունների վերաբերյալ ուսանողներին տեղեկացնելու համար կարող ենք ակտիվացնել «ուղարկեք բովանդակության փոփոխության ծանուցում» նշիչը, ինչի արդյունքում թեստը պահպանելու հրահանգից հետո գրանցված ուսանողներն իրենց

համալսարանական էլ. հասցեին նամակ-ծանուցում կատանան թեստի բովանդակությունում փոփոխություն կատարվելու վերաբերյալ:


«Վիկտորինայի» կարգաբերումները տեղադրելուց և անհրաժեշտ պայմանները սահմանելուց հետո այն դասախոսի էջում ունենում է հետևյալ տեսքը (նկ.33), տեղադրված առաջադրանքը նույն տեսքն ունի նաև ուսանողի էջում:



Նկ. 33

Կատարված այս ամբողջ գործընթացը միայն նկարագրում էր թեստի իրականացման պայմանները և թեստը դեռևս բովանդակություն չի պարունակում:


Թեստի բովանդակությունը ստեղծելու համար դասընթացի էջից խմբագրման ռեժիմում սեղմում ենք «Վիկտորինա» ռեսուրսը ցույց տվող պատկերի/նկարի կամ վերնագրի վրա (օրինակ նկ.33-ում «Թեստ 1.»-ի վրա), ինչի արդյունքում բացվում է թեստը ստեղծելու պատուհանը (նկ. 34),



Նկ. 34




որը պարունակում է տեղեկատվություն թեստի պայմանների վերաբերյալ և նաև «Ավելացնել հարց» հրահանգը: Ընտրելով այդ հրահանգը անցնում ենք թեստը ստեղծելու/կառուցելու ռեժիմ (նկ.35), որն իրենից ներկայացնում է թեստում նոր հարցեր ավելացնելու գործընթաց, ինչի համար «Ավելացնել» գործիքից ընտրում ենք, օրինակ «նոր հարց» տարբերակը, որը յուրաքանչյուր անգամ սկսելու է թեստում նոր հարցի ավելացման գործընթացը :



Նկ. 35

Թեստում նոր հարց ավելացնելու համար առաջարկվող ցանկից նախ ընտրում ենք հարցի տիպը (նկ. 36):



Նկ. 36

Համակարգը առաջարկում է **հարցերի տիպերի** բավականին մեծ ցանկ, դրանք են.

**Բազմակի ընտրություն** - հարցի այս տիպը թույլ է տալիս նախապես սահմանված ցուցակից ընտրել մեկ կամ մի քանի պատասխաններ:

**Բանաձևեր** - հարցի այս տեսակը պատահական արժեքներով և բազմակի պատասխաններով հարց է: Պատասխանների դաշտերը կարող են տեղադրվել ցանկացած վայրում, որպեսզի մենք կարողանանք ստեղծել հարցեր, որոնք ներառում են տարբեր կառուցվածքներ, ինչպիսիք են վեկտորները, բազմանդամները և մատրիցները: Այլ առանձնահատկություններ, ինչպիսիք են միավորի ստուգումը և բազմաթիվ մասերի հարցերը, նույնպես սերտորեն ինտեգրված են և հեշտ օգտագործման համար:

**Ընտրել բացակայող բառերը** – հարցի այս տեսակում հարցաթերթիկի մեջ բաց թողնված բառերը լրացվում են օգտագործվող բացվող ընտրացանկերի միջոցով:

**Թվային** - Թույլ է տալիս թվային պատասխան, հնարավոր է միավորներով, որը գնահատվում է տարբեր մոդելի պատասխանների համեմատությամբ, հնարավոր է թույլտվության հետ:

**Կարճ պատասխան** - թույլ է տալիս պատասխանել մեկ կամ մի քանի բառերով, որոնք գնահատվում են ըստ տարբեր մոդելի պատասխանների, որոնք կարող են պարունակել համապատասխանեցման տեքստեր:

**Համապատասխանեցում** - Մի շարք ենթահարցերից յուրաքանչյուրի պատասխանը պետք է ընտրվի հնարավոր տարբերակներից:

**Հաշվարկված** - Հաշվարկված հարցերը թվային հարցերի են նման, բայց վիկտորինայի ընդունման ժամանակ օգտագործված թվերից ընտրված են մի շարք:

**Հաշվարկված բազմակի ընտրություն** - Հաշվարկված բազմակի հարցերը նման են բազմընտրանքային հարցերի, որոնց ընտրության տարբերը կարող են ներառել բանաձևի արդյունքներ թվային արժեքներից, որոնք վիկտորինայի ընդունման ժամանակ ընտրվում են պատահականորեն մի շարք:

**Հաշվարկված պարզ** - Հաշվարկված հարցերի ավելի պարզ տարբերակ, որոնք նման են թվային հարցերի, բայց վիկտորինան ընդունվելիս պատահականորեն օգտագործված թվերով ընտրված են մի շարքից:

**Ձայնագրեք աուդիո/վիդեո** - Ուսանողները պատասխանում են հարցի տեքստին՝ ձայնագրելով աուդիո, վիդեո կամ էկրանի ձայնագրություն (կամ ցանկացած համակցության խառնուրդ, եթե ընտրեք «Բազմաթիվ վիդեոթերթեր» տարբերակը) անմիջապես իրենց դիտարկիչում: Այնուհետև սա

կարող է գնահատվել ձեռքով կամ ինքնագնահատման միջոցով, եթե դուք տեղադրել եք The Open University-ի անվճար կամընտիր վարքագծի հավելվածը:

**Ճիշտ-սխալ** - Բազմակի ընտրության հարցի պարզ ձև՝ ընդամենը երկու ընտրություն «Ճիշտ» և «Սխալ»:

**Ներդրված պատասխաններ (Cloze)** - Այս տեսակի հարցերը շատ ճկուն են, բայց դրանք կարող են ստեղծվել միայն հատուկ կողեր պարունակող տեքստ մուտքագրելով, որոնք ստեղծում են ներկառուցված բազմապատիկ, կարճ պատասխաններ և թվային հարցեր:

**Շարադրություն** - Թույլ է տալիս պատասխանել ֆայլերի վերբեռնման և (կամ) առցանց տեքստի: Դրանից հետո սա պետք է ձեռքով գնահատվի:

**Պատահական կարճ պատասխանների համընկնում** - Համապատասխանեցման հարցի պես, բայց պատահականորեն ստեղծված որոշակի կատեգորիայի կարճ պատասխանների հարցերից:

**Քաշել և թողնել նշիչները** - Մարկերները քաշվում և գցվում են ֆոնային պատկերի վրա:

Նշում. Այս հարցի տեսակը հասանելի չէ տեսողության խնդիրներ ունեցող օգտվողների համար:

**Քաշեք և գցեք պատկերը** - Պատկերները կամ տեքստային պիտակները քաշվում են և ընկնում ֆոնային պատկերի վրա գտնվող ֆոնային գոտիները:

Նշում. Հարցման այս տեսակը հասանելի չէ տեսողության խնդիրներ ունեցող օգտվողներին:

**Քաշեք և թողեք տեքստի մեջ** - Հարցի տեքստում բաց թողնված բառերը լրացվում են՝ օգտագործելով քաշել և թողնել:

**Նկարագրություն** - Սա իրականում հարց չէ, փոխարենը, սա միջոց է գործունեության մեջ որոշ ցուցումներ, հողված կամ այլ բովանդակություն ավելացնելու համար: Սա նման է այն եղանակին, որով պիտակները կարող են օգտագործվել դասընթացի էջում բովանդակություն ավելացնելու համար:

Առաջարկվող ցանկից ընտրում ենք հարցի տիպերից որևէ մեկը, օրինակ «բազմակի ընտրություն» տարբերակը և սեղմում ենք այդ պատուհանի ներքևում տեղադրված «**Ավելացնել**» հրահանգի վրա (նկ.36):

Այդ հրահանգի արդյունքում բացված պատուհանի.

«**Հիմնական**» բաժնում (նկ.37) լրացնում ենք հարցի անունը, հարցի տեքստը, հարցի կարգավիճակը (պատրաստ կամ սևագիր), ճիշտ պատասխանների քանակը, համարակալման ձևը, պատասխանների դասավորվածությունը:

**Ավելացնելով բազմակի ընտրության հարց**


✓ **Հիմնական**  
 Կատեգորիա: Լեռնայն ԼՅ330011100223021698171 - ի համար (3)  
 Հարցման անուն: Հարց 1.  
 Հարցման տեքստ:

Հարցի կարգավիճակ: Պատրաստ  
 Լեռնայն նշանը: 1  
 Ընդհանուր արձագանք:

Եռյնականացման համար:  
 Մեկ կամ բազմաթիվ պատասխաններ: Միայն մեկ պատասխան  
 Խտանել ընտրությունները  
 Թվարկել ընտրությունները: 1., 2., 3., ...  
 Ցույց տալ ստանդարտ հրահանգներ: Ոչ


Նկ. 37

«Պատասխաններ» բաժնի (նկ.38) դաշտերում գրում ենք պատասխանների տարբերակները, որոնցից յուրաքանչյուրի համար լրացնում ենք որպես պատասխան առաջարկվող ընտրության տարբերակը, օրինակ **Ընտրություն 1**-ի դաշտում լրացնում ենք ընտրության համար առաջարկվող պատասխաններից մեկը, **Գնահատական** դաշտում ընտրում ենք պատասխանի ճշտության գնահատումը տոկոսներով, **Ճիշտ** պատասխանի համար ընտրում ենք 100%, մնացած դեպքերում կամ «ոչ մեկը», կամ միջանկյալ որևէ ցուցանիշ՝ մասամբ ճիշտ պատասխանի համար, սխալ պատասխանի համար՝ 0%: Յուրաքանչյուր տարբերակի համար ներկայացված է ոչ պարտադիր լրացման **հետադարձ կապի** դաշտը, որում կարելի է գրել գրել մեկնաբանություններ կամ բացատրություններ կոնկրետ պատասխանի վերաբերյալ:



Նկ. 38


Հարցի խմբագրումը եզրափակում ենք «պահպանել փոփոխությունները» հրամանով, որից հետո համակարգը վերադարձնում է թեստի համար հերթական հարց ավելացնելու ռեժիմ, որն արդեն ներառում է նաև ներմուծված հարցի վերաբերյալ տեղեկատվությունը (նկ.39):



Նկ. 39

Նույն քայլերով շարունակում ենք թեստում նոր հարցեր ավելացնելու գործընթացը: Հարցերը սպառելուց հետո թեստը պահպանելու և ուսանողներին հասանելի դարձնելու համար (նկ. 39) կատարում ենք «Պահել» հրահանգը:

Այս հրահանգից հետո ուսանողներն իրենց էլ.փոստերին նամակ-ծանուցում (նկ. 40 ) են ստանում տեղադրված առաջադրանքի վերաբերյալ (եթե այդ ռեժիմը դասախոսը միացրել է՝ տես նկ. 32).






Նկ. 40

Նշենք, որ նախ ուսանողը զգուշացվում է, որ վիկտորինային մասնակցելու ժամանակը և փորձերը սահմանափակ են, այնուհետև ուսանողի կողմից կրկնակի հաստատման դեպքում ակտիվացնում է վիկտորինան և սկսում է ժամանակի մեկնարկը: Մինչև ժամանակի սպառվելը ուսանողը կարող է պահպանել թեստը սևագիր տարբերակով, հետո խմբագրել, սակայն ժամանակի սպառումից հետո գործընթացի ավարտի վարքագիծը կախված կլինի դասախոսի կողմից նախապես սահմանված տարբերակներից:

Ավարտից հետո ուսանողը հաստատում է պատասխանը և ուղարկում: Հարցման արդյունքների, ճիշտ և սխալ պատասխանների, արձագանքների և ժամային կարգավորումների մասին հաշվետվությունն անիջապես հասանելի է դառնում և ուսանողի և դասախոսի էջերում:

Հաջորդիվ նկարներում ներկայացված են թեստերը լրացնելու և պատասխանները տեսնելու ուսանողների հնարավորությունները.



## Մկսել փորձը



### Ժամկետը

Ձեր փորձը կունենա 45 րոպեներ ժամկետ: Երբ սկսում եք, ժամաչափը կատարում է հետհաշվարկ և չի կարող դադարեցվել: Ձեր փորձը պետք է ավարտեք նախքան դրա ժամկետի ավարտը: Վստահ եք, որ ցանկանում եք սկսել հիմա:

Մկսել փորձը

Չեղարկել



## Թեստ 1.

ԵՊՀ Ինճանի մասնաճյուղ > 2023-2024 2 կիսամյակ > Փունկցիոն

-Անդադարեցնել

### Հարց 1

Դեռ պատասխանված չէ

Նշված է 1:00-ից

▼ Նշել հարցը

⚙️ Խմբագրել հարցը

v1 (latest)

Հայատուսնի մայրաքաղաքը:

- 1. Գյումրի
- 2. Իջևան
- 3. Երևան

Մաքրել իմ ընտրությունը

### Հարց 2

Դեռ պատասխանված չէ

Նշված է 1:00-ից

▼ Նշել հարցը

⚙️ Խմբագրել հարցը

v1 (latest)

Քանի բազիսային ֆունկցիա կա ըստ Գյոդելի ձևաբանության:

Պատասխան:



Թույլատրված փոքմեր՝ 2

Ժամանակի սահմանափակում՝ 45 րոպեներ

Գնահատման եղանակ՝ Անհատարձր գնահատականը

Անցնող գնահատական՝ 3:00 20:00-ից:

### Ձեր նախորդ փորձերի ամփոփում

Փորձ	Վիճակ	Նշաններ / 2:00	Գնահատական / 20:00	Վերանայել	<Նստադարձ կապ
Նախադիտում	Ավարտված է Ներկայացվել է չորեքշաբթի, 21 փետրվարի 2024, 4:04 AM	2:00	20:00	<a href="#">Վերանայել</a>	Ընդրիտվորում եմ, դուք թեման յուրացրել եք:

Անհատարձր գնահատականը: 20:00 / 20:00:

Ընդհանուր հետադարձ կապ



## Թեստ 1.

ԵՊՀ Ինչևանի մասնաճյուղ > 2023-2024 2 կիսամյակ > Բնագիտություն > Փունկցիոնալ ծրագրի

Մեկնարկված է	չորեքշաբթի, 21 փետրվարի 2024, 4:01 AM
Վիճակ	Ավարտված է
Ավարտված է	չորեքշաբթի, 21 փետրվարի 2024, 4:04 AM
Ժամանակը վերցված է	3 րոպեներ 19 վրկ
Նշաններ	2:00 / 2:00
Գնահատական	20:00 - ը 20:00 - ից (100%) »
<Նստադարձ կապ	Ընդրիտվորում եմ, դուք թեման յուրացրել եք:

### Հարց 1

ճիշտ է

Նշել 1:00 1:00-ից

[Նշել հարցը](#)

[Խմբագրել հարցը](#)

v1 (latest)

Հայաստանի մայրաքաղաքը:

- 1. Գյումրի
- 2. Իջևան
- 3. Երևան ✓ Երևանի Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է, որը կառուցվել է մ.թ.ա. 782թ.-ին:

Ձեր պատասխանը ճիշտ է

Լավ զիտեք պատմություն

### Հարց 2

ճիշտ է

Նշել 1:00 1:00-ից

[Նշել հարցը](#)

[Խմբագրել հարցը](#)

v1 (latest)

Քանի բազիսային ֆունկցիա կա ըստ Գորդելի ձևաբանության:

Պատասխան:  ✓